

891995  
2 - 30

Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ  
(ՀՍՏ Վ. ԲԻԱՆԿԻԻ)

# ԱՆՏՈՒ ՏԱԿԱՆԻ

ՆԳԱՐՆԵՐԸ  
Ն. ՏԵՐՄԻ



891. 990  
2-30

ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱДЕՄԻ ԿԿ ԿԻՑ  
ՊԱՆԱ-ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ  
ԴՐԱԳԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ  
1937

30

10368



Դետի ափին, անտառում  
Յերգում ելին, ճովողում  
Յեկ թոշկոտում վեր ու վար  
Ծիծեռնակներ անհամար:  
Մի պստիկը նրանց մեջ  
Թոշում, ճշում եր անվերջ,  
Ճարպիկ—ինչպես թոշող մուկ,—  
Նրա ո՞նունն եր Սևուկ:



Մին ել աեսան, թե ինչպես  
Արծիվն իջավ նետի պես—  
Չար արծիվը կատաղած  
Ճանկ ու կտուց լայն բացած  
Ծիծեռնակներն իմացան,  
Անտառի մեջ թագ կացան,  
Իսկ Սևուկը վախեցած  
Մլանում եր դես առաջ:

Մին ել նալեց դեպի լետ,  
Տեսավ կորել են անհետ  
Ընկերները սարուափած  
Ինքն ել կամաց իջավ ցած:  
Ճամբեն լերկար, անծանոթ,  
Ել վոնց դառնա իր մոր մոտէ  
Իջավ, նստեց մի ծառի,  
Վոր մտածի-ինչ անի:



35964-62



Մին ել տեսավ, վոր ճամբով  
Սև ու սիրուն վզկապով  
Դեղին թռչնակ ե գալիս,  
Նրան բարե ե տալիս,  
—Բարե՛, բարե՛, քույրիկ ջան,  
Ասա տեսնեմ, աննման,  
Ինչպես դառնամ յես մեր տուն,  
Մոլորդել եմ անտառում:

—Իսկ դու ով ես, սիրունիկ,  
Ինչքան լավն ես ու պսալիկ:  
—Սկուկ ե իմ տառունը,  
Կորցրել եմ մեր տունը:  
—Ինձ ել կտցար են ասում,  
Յես ապրում եմ ավագում:  
Վնաս չունի, յեկ ինձ մոտ,  
Մնա մինչև առավոտ:



Կտցար, Սկուկ միասին  
Մի քիչ առաջ գնացին,  
Մին ել կտցարը հանկարծ  
Մի տեղ կանգնեց ու ասաց.  
—Այ, իմ տունը, բարեկամ,  
Ներս մտիր, վոր պատիվ տամ: —  
Մեր Սկուկը զարմացած  
Նայեց առաջ, նայեց ցած,  
Տեսավ ավագ ու քարեր,  
Վոչ տանիք կա, վոչ պատեր:  
—Տունդ վժըն ե, քույրիկ ջան,  
Բան չեմ տեսնում տան նման:

—Այդ ինչե՞ր ես խոսում դուք  
Հրես տունս, մեջը ձու:  
Ել լավ տուն կա սրա պես:  
Հը, իմ տանը հավան չես:  
—Հավանելը հավան եմ,  
Բայց չեմ կարող յես քնել  
Մերկ ու քարոտ հատակին,  
Սուանց փափուկ ներքնակի:  
—Ափսոս, ափսոս, սիրելիս,  
Վոր տունս դուք չի գալիս,  
Թե չե քեզ պես հլուրերի  
Յես կարոտ եմ, սիրելի:




ԱՌ յեղանու անտառում  
Մի աղավնի յե ապրում.  
Տունն ունի լավ տանիք,  
Հատակ, պատեր գեղեցիկ.  
Յես կարծում եմ, բարեկամ,  
Այդ տունը քեզ դուր կդա:  
Թոիր, գնա նրա մոտ,  
մնա մինչև առավոտ:  
— Ծնորհակալ եմ, կացար ջան,  
Իմ սիրելի բարեկամ: —  
Ասավ, թռավ և իսկուն  
Գնաց դիմեց աղավնուն.  
— Բարե՛, բարե՛, ցեղակից,  
Ի՞նչ կլինի, սիրելիս,  
Թողնես՝ քեզ մոտ գիշերեմ,  
Յես մեր տունը կորցրել եմ:  
— Բարե՛: Բարով ես յեկել,  
Դու իմ հյուրն ես այս գիշեր:  
Ել մի՛ կանգնի դռանը:  
Հավանում ես իմ տանը:  
Մեր Սեուկը մտավ ներս,  
Տուն չեր տեսել դրա պես:

Ներս ու դուրսը լավ նայեց,  
Հետո մի քիչ մտածեց.  
«Ծակծկոտ ե, կվլչի,  
Սառը քամի կվչի,  
Խչպես քնեմ սրա մոտ  
Ցրտում մինչև առավոտ»:  
— Տունդ լավ ե, խոսք չունեմ,  
Բայց յես փոքրուց սովոր չեմ  
Քնել տնում ծակծկոտ:  
Չե, չեմ քնի յես քեզ մոտ:  
— Ափսոս, ափսոս, սիրելիս,  
Վոր տունս չի դուր գալիս:  
Գնա դիմիր Պիրոլին,  
Նա բարի յե, սիրալիր:  
Նրա տունը, բարեկամ,  
Քեզ անպատճառ դուր կդա:  
Հրեն մոտիկ պուրակում,  
Միրուն կեչու արանքում:  
— Ծնորհակալ եմ, սիրելի,  
Գնամ՝ դիմեն Պիրոլին:  
Թեին տվեց Սեուկը,  
Դեպի մոտիկ պուրակը:



Կեչու ծառեր ինչքան կան,  
Մեկը մեկից գովական:  
Պտտեց շուրջը ծառերի՝  
Գտնի տունը Պիրոլի:  
Խեղճը հոգնել եր արդեն:  
Շատ ման յեկավ դես ու դեն,  
Մնաց ապշած, զարմացած,  
Յերբ վոր տեսավ նա հանկարծ  
Ճլուղից կախված գլխիվար  
Պստիկ տնակ մի հարմար,  
Կարծես մի վարդ մոխրագույն՝  
Կեչու ծառի արանքում:  
«Ես ինչ սիրուն պուրակ ե,

ինչ գեղեցիկ տնակ ե,  
Բայց պստիկ ու նեղ ե խիստ,  
Տեղ չի անի յերկուսիս»:  
Սեուկն այսպես մտածեց,  
Գնաց գոնակը ծեծեց:  
Մին ել սաստիկ վժժոցով,  
Խնչպես քանուց վրփրած ծով,  
Կրետները ահազին  
Վրա տվին Սեուկին:  
«Ի՞նչ փորձանքի յես հասա,  
Կրետների բուն ե սա»: —  
Մտածեց ու վախեցած  
Թևին տվեց, իջավ ցած:



—Եղ վնրտեղից ես զալիս,—  
Հարցըց մեկը վերեից:  
Նայեց վերև նա իսկուն  
Տեսավ կեչու արանքում  
Մի մեծ թռչուն վոսկեգուն  
Նստած իրեն ե դիտում:  
—Պիրոլին եմ յես փնտում,  
Մոլորվել եմ անտառում:  
Պիտի խնդրեմ՝ նրա մոտ

Թնհմ մինչև առավոտ:  
—Պիրոլը հենց յես եմ, յես,  
Իսկ իմ տունը՝ հրեն տես:  
Դես—դեն նայեց Սևուկը,—  
Հազիվ բացվեց աչք—ունքը,—  
Տեսավ՝ կեչու ճյուղերից  
Ամուր կախված—գիտե՞ք ինչ—  
Մի մեծ զամբյուղ գույնզգոււն,  
Առանց տանիք, բայց սիրուն:



—Ի՞նչ ես նստել դռանը,  
Զես հավանում իմ տանը:  
—Սա նման է նավակի:  
Այստեղ սիրոս կճաքի:  
Քանի կանի, կորորի,  
Հա կտանի, կբերի:  
Զե, յես ալստեղ չեմ քնի,  
Տունդ տանիք ել չունի:  
—Ափառս ափսնս, բարեկամ,

Վոր տունս քեզ դուր չեկավ:  
Այս ծառի տակ, խոտերում  
ցախսարեկն ե ապրում:  
Փոքրիկ, դեղին թռչուն ե  
Տեսնես՝ ինչքան սիրուն ե:  
—Նրա տունը, թեև ցած,  
Բայց փափուկ ե, ծածկված:  
Կուզես՝ զնա նրա մոտ,  
Մնա՛ մինչև առավոտ:



— Ել, ցախսարեկ բարեկամ,  
Կթողնես, վոր քեզ մոտ դամ.  
Մոլորվել եմ անտառում,  
Քնելու տեղ եմ փնտռում:  
— Բարով յեկար, համեցե՛ք,  
Ի՞նչ ես կանգնել, դե ներս յեկ՝  
Տունս մեծ ե ու տաքուկ,  
Քամուց ազատ և փափուկ:  
Մեր Սեռվը մտավ ներս,  
Տունը տեսավ, հավանեց.  
Պատ, առաստաղ չոր խոտից,  
Անկողինը՝ բմբուլից:

— Ի՞նչ լավ տուն ե, քուրիկ ջան,  
Շատ ել նման ե մեր տան:  
Հենց վոր Սեռվը ներսում  
Հանգստանալ եր ուզում,  
Զայներ լսեց և հանկարծ  
Գետինը պինդ դղրդաց:  
Մեր Սեռվը սարսափեց,  
անտիրուհուն հարց տվեց.  
— Այս ի՞նչ բան ե, ցեղակից,  
Տունդ հո չի փուլ գալիս:  
— Վոչինչ մոտիկ անտառում  
Նժուկներն են սլանում:  
— Վալ, քուրիկ ջան, յես կորա:  
Յեթե ձին քո տան վրա  
Դնի իրեն սմբակը,  
Կղիմանամ տնակը:  
Տանտիրուհին մնաց լուռ,  
Դարձավ մուալ ու տխուր:  
— Սարսափելի յե ալստեղ.  
Մենք կկորչենք միատեղ:  
Ամբողջ գիշեր մի կարգին  
Քուն չի իջնի իմ աչքին.  
Կմտածեմ, թե պիտի  
Զին դա ու ինձ կոխուի:



Ախ, ափսոս իմ տնակը,—  
Հառաշեց մեր Սեռվը,—  
Ինչքան լավ ե ապահով,  
Զին չի անցնում այնտեղով:  
— Ծովասուզակն ունի  
Մի լավ տնակ յեղեգնից.  
Շուրջը ջուր ե, ապահով,  
Զի չի անցնում այն տեղով:  
Կուզես տանեմ նրա մոտ,  
Մնա մինչև առավոտ:  
Յեկ յերկուսով միասին  
Ճամբա ընկան, գնացին:  
Յերբ վոր հասան լճակին,  
Սարչակն ասաց Սեռվին.  
— Ե՞ն պոզավոր Սուզակը,  
Ե՞ն ել—իրա տնակը:  
Խոդիր, գնա նրա մոտ,  
Մնա մինչև առավոտ:  
Հաջողություն, քուրիկ ջան,  
Մնաս բարով, յես գնամ:  
— Շնորհակալ եմ ձեզանից,  
Ներողություն, սիրելիս:  
Յեկ Սեռվը զարմացած՝  
Կամաց—կամաց մոտ գնաց:



Տեսավ՝ ջրի լեռեսին  
Լող ե տալիս մի կղզի,  
Կղզին՝ մի խուրձ յեղեգնի,  
Մեջտեղին ել փոս ունի:  
Փոսում փոված ե չոր խոտ,  
Յերեք ձու ել իրար մոտ:  
Մի պոզավոր թռչուն ել  
Ջրի վրա պինդ նստել,  
Լող ե տալիս առաջ, յետ,  
Լողացող իր մեծ տան հետ:  
Նա մոտեցավ տնակին,  
Ցավը պատմեց Սուզակին:

—Ալիքների վրա տուն  
Համաձայն ես քնելու:  
—Ծովասուզակ բարեկամ,  
Ներողություն, մի հարց տամ.  
Չեր տնակը միշտ այսպես  
Շարժական ե նավի պես,  
Ափերի մոտ չի կանգնում,  
Յերեք հանդիսաւ չի առնում։  
—Գնա կորիր, դու անգործ,  
Ի՞նչ ես անում հարց ու փորձ:  
Ես ահագին անտառում  
Վոչի մի տուն չես հավանում։

Բայց մութն ընկնում եր արդեն։  
Շատ ման ւեկավ գես ու դեն  
Ու լաց յեղավ Սևուկը,  
Վախենում եր խղճուկը։  
Տեսավ մի ծառ ահազին,  
Փալտե սի տուն արանքին։  
—Անուշ քույրիկ, դուռը բաց,  
Յես հոգնած եմ, մոլորված։  
Թող ներս մանեմ ու քեզ մոտ  
Մսամ մինչև առավոտ։  
Դուռը բացվեց շտապով,

Չոված, պլշած աշքերով  
Պստիկ գազան մի դեղին  
Յելավ գոռաց անտեղի։  
—Եղ վմբ որից թռչունը  
Հյուր ե գալիս իմ տունը։  
Սկյուռ, թռչուն—յես ու դու—  
Ի՞նչ բարեկամ իրարու։  
Սիրտը ճաքեց Սևուկի,  
Քիչ մնաց, վոր վայր ընկնի։  
Ուին տվեց, սլացավ,  
Շատ թռչելուց թուլացավ։



Մին ել նալեց դեպի ցած,  
Նալեց՝ մնաց զարձացած.  
Մի ծանոթ գետ, մի անտառ,  
Ծանոթ տեղեր, ծանոթ ժայռ,  
Իսկ ժայռի մեջ շատ անցքեր—  
Ծիծեռնակի տնակներ,  
Ալղալիսի մի նեղ անցքով,

Յերկար—լերկար միջանցքով  
Սրագ անցավ Սևուկը,  
Հասավ իրենց տնակը:  
—Ես մւր ելի՞ր, Սևուկ ջան,—  
Հարցրեց մալրիկը նրան:—  
Բայց Սևուկը շատ հոգնած,  
Աչքը փակեց, բան չասաց:



Քնեց իրենց տնակում,  
Փափուկ ու չոր անկողնում,  
Վոր շինված եր չոր խոտից,  
Զիու մազից, բմբուլից:  
Բարի գիշեր, սիրելիս:



NL0400416

1  
ВИТАЛИЙ БИАНКИ  
ЛЕСНЫЕ ДОМИШКИ  
ГИЗ АРМ ССР, ЕРЕВАН, 1937

Խմբագիր՝ Վ. Հայրյան, տեխմքագիր՝ Ս. Գասպարյան, լեզվական խմբագիր՝ Հ. Պետրոսյան, որդագրել՝ Ա. Արց  
Գլուխիսի լինուր Խ-3224. Խմբ. 3443, պատճեռ 658, տիրած 5000 գիշերամի տարրան, օնտեխն. Անժելի 15

10368